Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Կ. Մարդանյանի անվան Բերդի թիվ 3 հիմնական

Թեմա՝ Ներառական կրթության կազմակերպումը տարրական դասարաններում

Վերապատրաստող, մենթոր՝ Էմմա Քոսակյան

Կատարող՝ Անահիտ Գյոզալյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն …… 3

Գլուխ 1. Ներառական կրթություն …… 6

1.1.Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության կազմակերպման առանձնահատկությունները 6

1.2.Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների դասակարգումը 13

Գլուխ 2. Հետազոտական աշխատանք …….. 19

2.1. Հետազոտական աշխատանքի կազմակերպում ……. 19

2.2. Անհատական աշխատանք ԿԱՊԿՈՒ սովորողի հետ ……. 20

Եզրակացություն …….. 24

Գրականության ցանկ …….. 25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթությունը գործընթաց է, որը հենվում է բոլոր, այդ թվում հատուկ կրթության կարիք և սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքի վրա: Ներառումն այսօրվա ըմբռնմամբ ծագում է հատուկ կրթությունից, որի զարգացումն անցել է մի քանի փուլեր: Դրանց ընթացքում ուսումնասիրվել են հաշմանդամություն ունեցող երեխաների ու սովորելու դժվարություններ ունեցող սովորողների կարիքների բավարարման տարբեր ուղիներ:

Ներառումը կրթության մեջ նշանակում է.

- արժևորել բոլոր աշակերտներին,
- ընդունել, որ ներառական կրթությունը ներառական հասարակության հիմնասյունն է,
- խթանել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մասնակցությունը հասարակական կյանքում և նվազեցնել նրանց բացառումը մշակութային, համայնքային ծրագրերից և դպրոցական կյանքից,
- կազմակերպել և իրականացնել մշակութային և քաղաքական վերակազմակերպում դպրոցական համայնքում, որի արդյունքում կբավարարվեն տարբեր տիպի կրթական կարիքներ ունեցող երեխաների պահանջները:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների խումբը միատարր խումբ չէ, և մեծամասամբ նրանց կարելի է տարբերակել այնպիսի բնորոշիչներով, ինչպիսիք են հաշմանդամությունը, տնտեսական կարգավիճակը, էթնիկական պատկանելիությունը, կամ վերջիններիս համադրությունը: Անկախ այն հանգամանքից, թե որ խմբին է պատկանում երեխան, կրթական գործընթացի ողջ պատասխանատվությունը իր վրա է վերցնում ուսուցիչը: Ուսուցչի մասնագիտությունը առավել մարդկային և ստեղծագործական մասնագիտություն է, և ուսուցիչն է պատասխանատու յուրաքանչյուր աշակերտի

անձի ձևավորման գործում ճիշտ հիմնաքար դնելու համար: Այս ամենը էլ ավելի վառ երանգներ է ստանում, երբ խոսքը գնում է տարրական դպրոցի ուսուցչի մասին, քանզի նա է բավարարում դպրոցական կյանք նոր մուտք գործած աշակերտի պահանջները, օգնելով նրան հարմարվել իր հասակակիցներին, նոր շրջապատին և միանալ ուսումնական գործընթացին: Ներառական կրթության հիմնական գործընթացը ենթադրում է, որ հանրակրթական դպրոցի տարրական դասարանների ուսուցիչն ունի որոշակի գիտելիքներ և պատկերացում տարբեր ունակություններով և կարողություններով աշակերտների կարիքների մասին, ծանոթ է նրանց կրթության մեթոդներին և ուսումնական պլանների ռազմավարությանը:

Հետազոտության արդիականությունը: ՀՀ-ում 2025թ.-ից հանրակրթական ուսումնական հաստատությունները ամբողջությամբ անցնելու են ներառական կրթության, այդ պատճառով ներառական կրթության կազմակերպման գործընթացը արդիական է:

Անդրադառնալով հայկական ներառական կրթության համակարգին՝ հարկավոր է նշել, որ այս համակարգը պաշտոնապես ընդունվել և հաստատվել է 2005թ.-ին և այսօր արդեն բազմաթիվ դպրոցներ իրականացնում են ներառական կրթություն՝ իրենց դռները բացելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների առջև: Այնուամենայնիվ, կրթական համակարգը շատ քիչ է հարմարեցված և պատրաստ չէ տրամադրել լիարժեք կրթություն այս երեխաներին՝ ելնելով նրանց կրթական առանձնահատկություններից: Հարկավոր է նշել այն հանգամանքը, որ բազմաթիվ բարեփոխումները այսօր բերել են նրան, որ ներառական կրթության լավագույն փորձը Հայաստանում դիտարկելի է հենց տարրական դասարաններում: Շատ մասնագետներ սա հիմնավորում են նրանով, որ տարրական դպրոցի ուսուցիչը բավականին երկար ժամանակ է անցկացնում իր դասարանի հետ և հնարավորություն է ունենում ճանաչել երեխաներին, նրանց կրթական և անձնային առանձնահատկությունները: Սակայն այստեղ էլ է տարրական դպրոցի ուսուցիչը բախվում խնդրի հետ, քանի որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները գալիս են դպրոց

առանց որևէ նախապատրաստվածության, շատ դեպքերում ունենալով հասարակության բացասական վերաբերմունքը: Հայ իրականության մեջ շատ ուսուցիչներ, դասավանդելով տարրական դպրոցում և չունենալով հատուկ կրթություն ներառական դասարանում դասավանդելու համար, դժվարությամբ են կողմնորոշվում և կանգնում են փաստի առաջ՝ չհասկանալով, թե ինչպես կարելի է ուսուցանել այս երեխաներին կամ ներգրավել նրանց ուսումնական գործընթացում:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և վերլուծել ներառական կրթության գործընթացիկազմակերպման առանձնահատկությունները տարրական դասարաններում:

Հետազոտության խնդիրներն են՝

1.Ուսումնասիրել հիմնախնդրին վերաբերվող մասնագիտական գրականություն:

2. Մասնակցել ներառական կրթության կազմակերպման աշխատանքներին դպրոցում:

3.Ուսումնասիրել տարրական դասարանում ԿԱՊԿՈՒ սովորողի գունազգացողությունը կերպարվեստի դասերին:

4.Կատարել արդյունքների վերլուծություն, կազմել եզրակացություն:

Հետազոտության ընտրանքը՝ տարրական օղակի աշակերտներ

Հետազոտության մեթոդները՝ դիտում, զրույց-քննարկում, համեմատում:

Գլուխ 1. Ներառական կրթություն

1.1. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կրթության կազմակերպման առանձնահատկությունները

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համակարգված պրոֆեսիոնալ աջակցություն ցուցաբերելու գիտակցությամբ ՛՛Հույսի կամուրջ՛՛ ՀԿ-ն ԿԳՄՍ նախարարության հետ համատեղ 2001թ.-ին առաջինը Հայաստանում սկսեց ներառական կրթության ծրագիրը: Այսօր արդեն ներառական կրթության ՛՛Հույսի կամուրջ՛՛ ՀԿ-ի փորձը դարձավ այն հիմքը, որի վրա երկրում մշակվեց ներառական կրթության քաղաքականությունը:

2005թ.-ի սեպտեմբերի 1-ին ուժի մեջ մտավ ՛՛Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին՛՛ ՀՀ օրենքը: Դրանով պետականորեն ճանաչվեց և ամրագրվեց նաև ներառական կրթությունը Հայասատանում:

Այսպիսով, հանրակրթության ոլորտը կարգավորվում էր երկու առանձին օրենքով, և օրենքի մակարդակում ներառում չկար, իսկ սովորական՝ հանրակրթական դպրոցում երկու առանձին գործընթաց էր գնում: Այդ իսկ պատճառով կարիք առաջացավ, որպեսզի օրենքները միավորվեն:

2014թ.-ի դեկտեմբերի 1-ին փոփոխություն կատարվեց ՛՛Հանրակրթության մասին՛՛ օրենքում և ուժը կորցրած ճանաչվեց ՛՛Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին՛՛ ՀՀ օրենքը:

Այդ փոփոխությամբ ՀՀ-ն հռչակեց ներառական կրթությունը որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունք: Մինչև 2025թ.-ը Հայաստանում բոլոր հանրակրթական դպրոցների կրթության կազմակերպումը կլինի ներառական:

Օրենքի նոր փոփոխությունը ենթադրում է ներառական կրթությանն աջակցող եռաստիճան՝ մանկավարժահոգեբանական աջակցության

ծառայությունների ներդրում դպրոցի, մարզի և հզնրապետության մակարդակներում:

Օրենքի փոփոխությամբ երեխայի անհատական ուսուցման պլանը սահմանվում է որպես իրավական փաստաթուղթ՝ հիմնված հանրակրթության պետական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի արդյունքների վրա:

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար:

Ներառական կրթությունը հանրակրթության զարգացման գործընթաց է, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռում հաշմանդամություն ունեցող երեխաներին:

Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցողները:

Չի կարելի ստեղծել ներառական կրթության համընդհանուր կաղապար, որը կարելի կլինի առանց որևէ փոփոխության ներմուծել յուրաքանչյուր հասարակություն: Ամեն մի հանրություն ինքը պիտի մշակի և իրագործի սեփական գաղարները: Այն նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ, որոնք անցյալում անհնար էին:

Ներառական կրթությունը մարդու իրավունք է: Այն ապահովում է լավ կրթություն և սոցիալական առումով հիմնավորված է:

Դպրոցում երեխաներին միմյանցից առանձնացնելու օրինական հիմքեր չկան: Երեխաները պետք է սովորեն միասին: Դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք չէ նրանց պաշտպանել միմյանցից: Բոլոր երեխաներին պետք է կրթություն, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատելու և պատրաստելու կյանքին: Միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը:

Երբ ԿԱՊԿՈՒ սովորողը չի հասցնում ծրագիրը և զգալիորեն հետ է մնում հասակակիցներից, ուսուցիչը սկսում է մտածել, որ նա չի կարողանում սովորել, և ավելի քիչ է ընդգրկում դասապրոցեսում: Իրականում պետք է վերհանել այն խնդիրները, որոնք խանգարում են աշակերտի ուսումնառությանը, պարզում նրա հնարավորությունները և կարողությունները [Ս. Պետրոսյան, 2018]:

Երեխաները, անկախ հաշմանդամություն կամ սովորելու դժվարություններ ունենալուց, դպրոցն ավարտելուց հետո որոշակի դերակատարություն ունեն հասարակության կյանքում և վաղ սկիզբը հանրակրթական խաղախմբերում կամ մսուրներում, որոնց հաջորդում են միջնակարգ դպրոցն ու քոլեջը, լավագույն նախապատրաստությունն է ինտեգրված կյանքի համար:

Հաշմանդամություն ունեցող երեխաներն ունեն նույն խմբին պատկանելու նույնպիսի իրավունք, ինչպես մյուսները: Առանձնացված ուսուցումը սահմանափակում է ինքնարտահայտման իրավունքներն ու հնարավորությունները.

- ✓ <u>ներառական կրթության իրագործմանն ուղղված բոլոր ջանքերը հենվում են իրավահավասարության գաղափարի վրա</u>. եթե մենք դա անում ենք, ելնելով խղճահարությունից կամ բարեգործական մղումներից, երբեք չենք կարող անհրաժեշտ արդյունքի հասնել,
- ✓ <u>բոլոր երեխաներն էլ կարող են սովորել</u>. պետք է ապահովել համապատասխան պայմաններ նրանց կրթության համար,

- ✓ <u>կան բազմաթիվ կրթօջախներ, որոնք աշխատում են ի շահ հաշմանդամություն ունեցող երեխաների և լավ են կատարում իրենց աշխատանքը:</u>

Եթե ներառական կրթության մեթոդաբանությունը մշակված է ողջ կրթական համակարգի համար, ապա ամեն մի երեխա կգտնի իր տեղն այդ համակարգում, և հնարավոր կլինի դպրոցում սովորելը համատեղել ընտանիքի գրկում ապրելու հետ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ – ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող անձ, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ:

Կրթության առանձնահատուկ պայմաններ – անձի հանրակրթական հիմնական ծրագրի յուրացմանը նպատակաուղղված առարկայական ծրագրերի և ուսուցման մեթոդների, ուսուցման անհատական տեխնիկական միջոցների, հարմարեցված միջավայրի, ինչպես նաև՝ մանկավարժական, սոցիալական և այլ ծառայությունների ամբողջություն:

Ներառական կրթություն – յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈՒ/, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումը [՞՞Հույսի կամուրջ՞՞ ՀԿ, 2015]:

՞՞Հանրակրթության մասին՞՞ Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին մաս. ՞՞Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության,

հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը [ՀՀ օրենք /ՀՕ-200Ն/]:

Ներառական կրթության առկա վիճակի ՀՀ-ում: Յուրաքանչյուր, այդ թվում ԿԱՊԿՈՒ սովորողների կրթության իրավունքի իրացման գործընթացն այժմ խարսխվում է կրթության մատչելիության, հավասար մասնակցության և որակի ապահովման սկզբունքի վրա: ԿԱՊԿՈՒ յուրաքանչյուր սովորողի ուսուցման կազմակերպման ռազնավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների հիմքի վրա՝

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցերում,
- նրանք իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,
- երեխայի համակողմանի բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը՝ առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացման:

Ներառական կրթությունը ձգտում է հայտնաբերել այն բարդությունները, որոնք կարող են ծագել տարբեր պատճառներով [՛՛Ներառումը կրթական գործընթացում՛՛, 2010]:

Ներառական կրթությունն այժմ համարվում է յուրաքանչյուր երեխայի կարողությունների լիարժեք բացահայտման միջոցով որակյալ կրթական ծառայությունների մատուցման գործընթացների ամբողջություն: Այս տեսանկյունից յուրաքանչյուր, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ երեխայի որակյալ կրթության ապահովմանը խոչընդոտող գործոններ կարող են լինել իր կարողություններին չհամապատասխանող կրթական ծրագրերը, ուսումնական նյութերը, ուսուցչի վերաբերմունքը, միջավայրի ֆիզիկական խոչընդոտները:

Որակյալ կրթության ապահովմանն ուղղված քաղաքականությունը պետք է հիմնականում կենտրոնանա միջավայրին խոչընդոտների վերացման և հավասար հնարավորությունների ստեղծման ուղղությամբ:

Բազմաթիվ դպրոցների ֆիզիկական միջավայրը /դասասենյակները, սանհանգույց, մարզահրապարակ և այլն/ դեռևս խոչընդոտում է առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ազատ ներառումը [՝՝Ինչպես խթանել սովորողների ներառումը դասարանում՝՝, 2020]:

Հիմնականում դասասենյակները կահավորված են լինում ավանդական ձևերով, որը խոչընդոտում է ԿԱՊԿՈՒ սովորողների՝ դասապրոցեսում ակտիվ ներգրավվածությունը: Բացի այդ, դասասենյակները պետք է համալրված լինեն դիդակտիկ նյութերով, զարգացնող խաղերով, որոնց անհրաժեշտությունը մեծ է հատկապես տարբեր դպրոցներում ԿԱՊԿՈՒ սովորողների կրթությունը արդյունավետ կազմակերպելու համար [՝՝Ներառական կրթության ժամանակակից խնդիրներն ու մարտահրավերները՝՝ /հոդվածների ժողովածու/]:

Կրթության գործընթացում երեխայի առավելագույն մասնակցությունն ապահովելու նպատակով կատարվել են անհրաժեշտ մեթոդական ծրագրային և միջավայրային փոփոխություններ և հարմարեցումներ՝ կրթության առանձնահատուկ պայմաններ: Երեխան բոլորի նման մասնակից է կրթական գործընթացին՝ իր կարողությունների առավելագույն չափով:

Ներառական կրթության նպատակը, ի վերջո, այն է, որ հասարակությունը գիտակցի՝ իր յուրաքանչյուր անդամ /անկախ նրա հասարակական և հոգեֆիզիկական նախադրյալներից/ պետք է հնարավորություն ունենա հասարակության բոլոր անդամների հետ համագործակցելով ինքնադրսևորվելու, այսինքն՝ առանց արհեստական խոչընդոտներ հաղթահարելու կարողանա լուծել հասարակության մեջ սոցիալիզացվելու իր խնդիրները: Սա հասարակությանը կձերբազատի կենսագործունեության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների մի շարք հիմնախնդիրները լուծելու բեռից և կավելացնի վերջիններիս ինքնավստահությունը, հնարավորություններ կընձեռի նրանց հավաստի կարգավիճակով հասարակության մեջ ինքնահիրացվելու: Անհրաժեշտ է կրթել

հասարակությանը և սերմանել հարգանք բոլոր մարդկանց իրավունքների հանդեպ [Ռ. Ն. Ազարյան, Վ. Գ. Խալաթյան, 2001]:

Կարևոր են հետևյալ կետերը՝

1. Ուսուցիչը պետք է կատարելագործվի, տիրապետի նոր մանկավարժական տեխնոլոգիաների, ժամանակակից մանկավարժական ձևերի և մեթոդների:
2. Ճիշտ կազմակերպումը՝ դպրոցի, դասարանի հարմարեցումը, բազմամասնագիտական թիմի աշխատանքը և այլն [<<Инклюзивное образование>>, 2019]:

Ուսուցման ընթացքում իրականացվում են նաև դաստիարակչական աշխատանքներ: Աշակերտները սովորում են լինել ինքնուրույն, նախաձեռնող: Օրինակ՝ լուծելով տարաբնույթ մաթեմատիկական առաջադրանքներ՝ աշակերտները սովորում են հաղթահարել դժվարությունները, գործը հասցնել մինչև վերջ /գտնել ճիշտ պատասխանը/: Զարգացնելով նրանց մաթեմատիկական էլեմենտար պատկերացումները՝ դաստիարակվում է նպատակասլացություն, կարգապահություն, սեփական գործողությունները վերահսկելու ունակություն [<<Обучение математике школьников особенностями развития>>, 2006]:

Այսպիսով՝ ներառական կրթությունը լավագույն լուծումներն է առաջարկում հանրակրթության համակարգին և կարող է ապահովել, որ բավարարվեն բոլոր սովորողների կրթական կարիքները:

1.2. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների դասակարգումը

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հասարակության մեջ ինտեգրման գործընթացը կախված է այդ մարդկանց նկատմամբ հասարակության վերաբերմունքից, նրանց կյանքի և առանձնահատկությունների մասին շրջապատի տեղեկացվածությունից: Օգնել հաշմանդամություն ունեցող անձին՝ նշանակում է ընդունել և հասկանալ նրա աշխարհը, մարդու աշխարհը, որի կարիք ունի ուշադրության և սրտացավ վերաբերմունքի: Հաշմանդամություն ունեցող անձանց համար լինել անկախ նշանակում է ունենալ հնարավորություն ապրել բոլորի նման, չլինել օգնության պասիվ սպառողներ, այլ ունենալ սեփական կյանքի համար պատասխանատվություն կրելու հնարավորությունների մեծ ընտրություն և իրավունք: Ներկայումս հաշմանդամության ընկալման վերաբերյալ գոյություն ունեն և պրակտիկայում կամա թե ակամա կիրառվում են երկու մոդելներ՝ բժշկական և սոցիալական, որոնցից յուրաքանչյուրը պատկերացում է տալիս այն մասին, թե ինչն է որոշիչ ՛՛հաշմանդամ՛՛ բառի մեջ [՛՛Հույսի կամուրջ՛՛, ՛՛Պերսպեկտիվա՛՛, 2004]:

Բժշկական մոդել: Հաշմադամության բժշկական մոդելը հաշմանդամությունը սահմանում է որպես բժշկական երևույթ /՛՛հիվանդ մարդ՛՛, ՛՛ֆիզիկական ծանր վնասվածքներ ունեցող մարդ՛՛, ՛՛ինտելեկտուալ խանգարումներ ունեցող մարդ՛՛ և այլն/: Ելնելով այդ պրոցեսից՝ տեղի են ունենում փոփոխություններ երեխայի կրթության և դաստիարակության գործում [Садхана Атван, 2004]:

Բժշկական մոդելի տեսանկյունից հաշմանդամությունը դիտարկվում է որպես անձի խնդիր, և պետության քաղաքականությունն ու ջանքերը ուղղվում են անձի բուժմանը, վերականգնմանը, հատուկ խնամքին և աջակցությանը:

Չբացառելով հաշմանդամության բժշկական մոդելի կարևորությունը՝ հաշմանդամության սոցիալական մոդելը հաշմանդամությունը դիտարկում է որպես հասարակության սոցիալ – մշակութային արժեքների հետևանք: Այս

մոտեցումը բացարձակապես կառուցված է մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վրա և կոչ է անում ստեղծել լիարժեք մասնակցության հնարավորություններ հասարակության բոլոր քաղաքացիների համար: Հաշմանդամության սոցիալական մոդելը կենտրոնանում է արգելքների և խոչընդոտների վերացման վրա և վստահում է հաշմանդամություն ունեցող մարդու՝ որպես երկրի լիարժեք քաղաքացու, կարողություններին և ներուժին: Սոցիալական մոտեցման կիրառումը կհանգեցնի հաշմանդամություն ունեցող մարդկանց հնարավորությունների հավասարեցմանը մյուս բոլոր մարդկանց հետ և նրանց համար ճանապարհ կբացի դեպի լիարժեք կյանք:

՛՛Հատուկ կարիքներով՛՛ են այն երեխաները, որոնց զարգացումը ՛՛շեղվում է՛՛ այսպես կոչված ՛՛միջին նորմայից՛՛, որն էլ ժամանակի ընթացքում իր ազդեցությունն է թողնում նրանց ֆիզիկական և հոգեկան առանձնահատկությունների և որակների ձևավորման վրա: ՛՛Հատուկ կարիքներով՛՛ են համարվում նաև հոգեֆիզիկական զարգացման առանձնահատկություններ ունեցող այն անձինք, ովքեր շփվելու, տեղաշարժվելու, սովորելու, սոցիալական միջավայրում հարմարվելու և ինքնուրույն ապրելու համար հատուկ պայմանների կարիք են զգում: Այդպիսիք են հատկապես տեսողության, լսողության, խոսքի, հենաշարժողական համակարգի խախտումներով, մտավոր խնդիրներով, հոգեկան զարգացման հապաղումով, հուզակամային ոլորտի խանգարումներով երեխաները:

Երեխաները, որոնք առանձնահատուկ ընդգծված ընդունակություններ ունեն և դրանցով տարբերվում են հասակակիցներից, հաճախ սոցիալական տարբեր խնդիրնե են ունենում ինչպես հասակակիցների, այնպես էլ մեծահասակների հետ: Դրանք արտահայտվում են նրանց հետաքրքրությունների, գործունեության շարժառիթների և ձևերի առանձնահատկություններում, շփման որակների մեջ, կրթադաստիարակչական և էլի շատ այլ հարցերում: Այս ամենը թույլ է տալիս ենթադրել, որ նման երեխաները նույնպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեն:

Պետք է նշել, որ հատուկ են ինչպես այս երեխաների կարիքները, ապրելու պայմանները, այնպես էլ նրանց խնամելու, կրթելու և դաստիարակելու պահանջները: Ուսուցիչները պետք է տեղյակ լինեն, որ ճիշտ չէ ընդհանրացնել կրթության հկարիքները, քանզի յուրաքանչյուր անձ անհատ է և շատ կարևոր է, որ ուսուցիչը նրանց լավ ճանաչի [Հանրակրթական դպրոցների ուսուցիչների եռօրյա սեմինարի նյութեր]:

Զարգացման խանգարումների դասակարգումը: Զարգացման խանգարումները և դրանց դասակարգումը կարևոր նշանակություն ունեն, քանի որ օգնում են որոշելու միջամտության ոլորտն ու ապահովում բազմամասնագիտական աջակցություն:

Հայաստանում 1994թ.-ից լայնորեն կիրառվում է Հիվանդությունների միջազգային դասակարգման 10-րդ տարբերակը /ՀՄԴ10/, որը մշակվել և ներդրվել է Առողջապահության միջազգային կազմակերպության կողմից: այն բաղկացած է 21 բաժիններից, որոնցից յուրաքանչյուրն ունի ենթաբաժիններ:

Այս դասակարգումը առանձնացնում է մասնավորապես՝

- Հոգեկան և վարքային խանգարումները
- Անձի յուրահատուկ խանգարումները
- Մտավոր հետամնացությունը, հոգեբանական զարգացման խանգարումները
- Հոգեբանական զարգացման յուրահատուկ խանգարումները
- Ուսումնական ունակությունների զարգացման յուրահատուկ խանգարումները
- Հենաշարժողական համակարգի խանգարումները
- Նյարդային խանգարումները
- Զարգացման ընդհանուր խանգարումները
- Գերշարժումային խանգարումները
- Վարքի խանգարումները, վարքի և հույզերի խանգարումները
- Տեսողության խանգարումները
- Լսողության խանգարումները:

ՀՄԴ-ի վրա հիմնված գնահատման արդյունքում նշվում է երեխայի զարգացման առաջնային խանգարումը և նրանից բխող ուսումնական դժվարությունների պատճառ հանդիսացող երկրորդային խնդիրները, երաշխավորվում է համապատասխան կրթական ծրագիր: Կրթադաստիարակչական գործընթացների կազմակերպմանը համապատասխան որոշվում է ընդհանուր ուղղվածությունը, մանկավարժական միջոցառումների ձևերը և դրանց իրականացման պայմանները [Ռ. Ն. Ազարյան, Ա. Վ. Ավագյան, 2016]:

Լսողության խանգարումներ: Երեխայի ընդհանուր զարգացման գործընթացում կարևորվում է լսողական զգայարանի բնականոն զարգացումը: Ապացուցված է, որ լսողության կորուստը կամ նրա իջեցումը հանգեցնում է երկրորդային տարաբնույթ խանգարումների: Լսողության խանգարմանը զուգընթաց, որպես կանոն, տուժում է նաև երեխայի խոսքը: Դիտվում է ճանաչողական գործունեության զարգացման ընդհանուր թերզարգացում, խանգարվում է երեխայի անձնային ոլորտը, տուժում են գործունեության բոլոր տեսակները /խաղային, ուսումնական, աշխատանքային և այլն/:

Սուրդոմանկավարժությունը /լատ. surdus՝ չլսող/ հատուկ մանկավարժության կարևոր բաժիններից մեկն է: Այն ուսումնասիրում է լսողության խանգարում ունեցող անձանց կրթադաստիարակչական գործընթացի բովանդակությունը, սկզբունքները, ձևերը, մեթոդները, հնարներն ու միջոցները [Ռ. Ն. Ազարյան, Ա. Վ. Ավագյան, 2016]:

Տեսողության խանգարումներ: Հաստատված է, որ տեսողության բացակայությունը կամ նրա մասնակի խանգարումները բացասաբար են ազդում անձի զարգացման ողջ գործընթացի վրա [Ռ. Ն. Ազարյան, Ա. Վ. Ավագյան, 2016]:

Տիֆլոմանկավարժությունը /հուն. tiflos՝կույր/ գիտություն է տեսողական խանգարումներ ունեցող անձանց կրթության և դաստիարակության վերաբերյալ: Ընդհանուր մանկավարժության ճյուղ է, հատուկ մանկավարժության բաժիններից մեկը:

Տեսողության խանգարումներ ունեցող անձանց բնորոշ են հոգեֆիզիկական զարգացման առանձնահատկությունները, որոնք առաջին հերթին դրսևորվում են ճանաչողական և շարժողական ոլորտում, տարածության մեջ նրանց կողմնորոշմամբ, հասկացությունների և պատկերացումների խանգարմամբ և զարգացման ինքնագիտակցությամբ:

Տեսողության խանգարումները դժվարացնում են անձի հուզակամային ոլորտի ձևավորման և զարգացման, ինչպես նաև հաղորդակցման, խաղային, սոցիալական հարմարեցման գործընթացները:

Հենաշարժողական համակարգի խանգարումներ: Հենաշարժողական համակարգի խանգարում ունեցող երեխաները հիմնականում ունեն առաջնային շարժողական խանգարում: Այն կարող է դրսևորվել ինչպես շարժողական գործառույթների թերզարգացմամբ, այնպես էլ խանգարմամբ: Միժամանակ հաստատված է, որ այդ երեխաների մեծ մասի շարժողական խանգարումները զուգակցվում են հոգեկան և խոսքային խանգարումներով: Այդ է պատճառը, որ նրանք ունեն ոչ միայն բուժական և սոցիալական օգնություն, այլև հոգեբանամանկավարժական և լոգոպեդական աշխատանքների կարիք:

Այս երեխաների կրթությունն ունի զարգացնող բնույթ: Այն միտված է ֆիզիկական, ճանաչողական և խոսքային գործունեության խանգարումների հաղթահարմանը:

Խոսքային և հաղորդակցման խանգարումներ: Խոսքը կարևորագույն հոգեկան գործառույթ է, որի միջոցով իրականացվում է այս կամ այն լեզվով հաղորդակցումը: Եթե պահպանված են երեխայի լսողությունը և մտավոր ունակությունները, սակայն նկատվում են խոսքի խանգարումներ, ապա մասնագետները նրանց դասում են ՝՝խոսքի խանգարումներ ունեցող երեխաների՞՞ խմբին [Ռ. Ն. Ազարյան, Ա. Վ. Ավագյան, 2016]:

Խոսքի ու հաղորդակցական խանգարումների բացահայտմամբ, կանխարգելմամբ և հաղթահարմամբ զբաղվում է հատուկ մանկավարժության

բնագավառներից մեկը՝ լոգոպեդիան /logos-բառ, խոսք, paideia-դաստիարակություն, ուսուցում/:

Լոգոպեդիայի նպատակը խոսքի խանգարումներ ունեցող անձանց հետ իրականացվող կրթադաստիարակչական գործընթացի գիտականորեն հիմնավորված համակարգի մշակումն է, խոսքի խանգարումների կանխարգելումն ու հաղթահարումը:

Մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխաներ: ՛՛Մտավոր հետամնացություն՛՛ եզրույթը հատուկ մանկավարժության մեջ գործածվում է գլխուղեղի օրգանական ախտահարմամբ պայմանավորված ճանաչողական գործունեության կայուն խանգարման դեպքում [Ռ. Ն. Ազարյան, Ա. Վ. Ավագյան, 2016]:

Մտավոր հետամնացության ժամանակ արտահայտվում է անձի բոլոր հոգեկան գործընթացների որոկական փոփոխություն:

Մտավոր զարգացման խանգարումներ ունեցող երեխաների մոտ խախտված է շարժումների կոորդինացիան, ճկունությունը: Առանց մասնագիտական միջամտության հնարավոր չէ իրականացնել անգամ դպրոցական ուսուցման համար կարևոր գործունեության այնպիսի ձևեր, ինչպիսիք են նկարչությունը, ծեփը, ապլիկացիան, կառուցումը և այլն: Նրանք շուտ են օգնում, անուշադիր են, ցրված, ցածր է աշխատունակությունը: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ են մեթոդների և ուսումնական նյութերի բազմազանություն, որոնք ընտրվում են սովորողի կարողություններին համապատասխան [Ս. Հովսեփյան և ուրիշներ, 2010]:

Այսպիսով՝ անհրաժեշտ է լավ իմանալ ԿԱՊԿՈՒ սովորողների զարգացման խանգարումները, դասակարգումը, որովհետև հատուկ են ինչպես այս երեխաների կարիքները, ապրելու պայմանները, այնպես էլ նրանց խնամելու, կրթելու և դաստիարակելու պայմանները:

Գլուխ 2. Հետազոտական աշխատանք

2.1. Հետազոտական աշխատանքի կազմակերպում

Հետազոտական աշխատանքն իրականացրել ենք ՀՀ Տավուշի մարզի ՛՛Բերդի Կ. Մարդանյանի անվան թիվ 3 հիմնական դրոց՛՛ ՊՈԱԿ-ում:

Հետազոտական աշխատանքի համար մեր առջև դրել ենք հետևյալ նպատակները.

- ✓ Կատարել դասալսուներ 1-ին դասարանում, որտեղ կա ԿԱՊԿՈՒ սովորող: Վերլուծել նրա հետ տարվող աշխատանքները: Մշակել դասի պլաններ, որոնք կնպաստեն ԿԱՊԿՈՒ սովորողի ունակությունների զարգացմանը:
- ✓ Առաջարկել մեթոդներ կերպարվեստ, տեխնոլոգիա և երաժշտություն առարկաներում կիրառելու համար, որի ընթացքում կփորձենք զարգացնել աշակերտի գունազգացողությունը՝ կարմիր, դեղին, կանաչ գույները, որը առօրյա կյանքում նրան կօգնի օգտվել լուսացույցից:
- ✓ Այս ամենին զուգահեռ երկրաչափական պատկերներից կարողանա տարբերել շրջանը և եռանկյունը

Հետազոտության համակազմում ընդգրկվել է առաջին դասարանի աշակերտ Ա. Խ. –ն:

Դասարանում կա 24 սովորող: Ա.-ն 7 տարեկան է, սովորում է Բերդի Կ. Մարդանյանի անվան թիվ 3 հիմնական դրոցի 1-ին դասարանում: Ապրում է հայրիկի, մայրիկի, 2 եղբայրների և 3 քույրերի հետ:

Դասվարը նկատել է երեխայի առանձնահատկությունը: Բազմամասնագիտական թիմի անդամները հարցում են կազմակերպել:

24. 11. 2022թ. կատարվել է դպրոցական մակարդակի գնահատում: Ուսուցչի հետ միասին կատարվել է դիտարկում, որի հիման վրա լրացվել է առաջնային գնահատման արդյունքների թերթիկը:

07. 12. 2022թ. Տարածքային մակարդակի գնահատման կենտրոնից այցելել են, դասարանում կաատարել դիտարկում, զրուցել ծնողի, ուսուցչի հետ: Պարզել են, որ Ա.-ն չգիտի գույները, թվերը, տառերը:

Աշխատանքը սկսել ենք 26. 01. 2023թ.-ից: Իրականացրել ենք դիտում կերպարվեստի դասին: Կազմակերպել ենք դասալսում և կազմել արձանագրություն:

2.2. Անհատական աշխատանք ԿԱՊԿՈՒ սովորողի հետ

Ծանոթացնում ենք գույների հետ: Փորձում ենք շրջապատող առարկաների մեջ գտնել այն գույնը, որը սովորեցնում ենք: Հետագայում տվյալ գույնը փորձում ենք առանձնացնել այլ գույներից: Շրջապատող միջավայրում առանձնացնում ենք տվյալ գույնը կամ մեծ արկղում գտնվող իրերից առանձնացնում ենք միայն պահանջվող գույնն ունեցող առարկաները: Նույն աշխատանքը կատարում ենա մյուս գույների դեպքում: Կազմակերպում ենք տարաբնույթ խաղեր:

´´Ձև և գույն´´

Երկրաչափական պատկերների և գույների ուսուցում: Նպատակն է՝ տալ պատկերացում ձևի և գույնի մասին, սովորեցնել ճանաչել գույները, տարբերակել շրջանը և եռանկյունը, առանձնացնել և խմբավորել դրանք ըստ տարբեր հատկանիշների:

Խաղում ենք քարտերով – խաղաքարտը պարունակում է 3 տեսակ միրգ՝ նարինջ, խնձոր, նուռ /դեղին, կանաչ, կարմիր/: Յուրաքանչյուր մրգի վրա կան երկրաչափական պատկերներ: Առաջարկվում են հետևյալ առաջադրանքները.

- Ի՞նչ գույն ունի խնձորը և ո՞ր երկրաչափական պատկերն է բացակայում խնձորի վրա: Եթե այն ճիշտ գտնենք և լրացնենք, կստանանք խնձորի ամբողջական պատկերը:
- Ի՞նչ գույն ունի նուռը և ո՞ր երկրաչափական պատկերն է բացակայում նռան վրա: Եթե այն ճիշտ գտնենք և լրացնենք, կստանանք նռան ամբողջական պատկերը:

- Ի՞նչ գույն ունի նարինջը և ո՞ր երկրաչափական պատկերն է բացակայում նարնջի վրա: Եթե այն ճիշտ գտնենք և լրացնենք, կստանանք նարնջի ամբողջական պատկերը:

Հաջորդ առաջադրանքը. Առաջարկում ենք տեղավորել երկրաչափական պատկերները համապատասխան քարտի վրա: Այնուհետև հարցնում ենք՝ քանի՞ շրջան և քանի՞ եռանկյուն տեղավորվեց քարտի վրա, ի՞նչ գույն ունի դրանցից յուրաքանչյուրը [՛՛Երեխայի զրգացման մակարդակի գնահատման մեթոդիկա՛՛, 2011]:

Զարգացնող խաղեր Կյուիզենեերի փայտիկների միջոցով

՛՛Գտիր ինձ՛՛

Խաղի նպատակն է՝ զարգացնել սովորողի մաթեմատիկական-տրամաբանական կարողությունները /համատեղել գունայինը/:

Խաղի ընթացքում երեխան ստանում է հանձնարարություններ.

- Թվարկիր ձողերի գույները /կարմիր, կանաչ, դեղին/:
- Ըստ հաջորդականության դասավորիր 2 գույներ /կանաչ-կարմիր, դեղին-կանաչ և այլն/:
- Գտիր այն ձողերը, որոնք դեղին չեն:

Ամրապնդող աշխատանք



Խաղ ՝՝Լուսացույց՝՝

Խաղի նպատակն է՝ պատկերացում տալ լուսացույցի մասին, ծանոթացնել հիմնական գույների հետ, սովորեցնել անվանել գույները, զարգացնել ուշադրությունը, տեսողական ընկալումը և խոսքը, տարածության մեջ կողմնորոշումը, կապ գտնել երկրաչափական պատկեր շրջանի հետ:

Ընթացքը – Սովորողին առաջարկվում է ՝՝վերանորոգել՝՝ փչացած լուսացույցը՝ ճիշտ տեղադրելով գույները: Այնուհետև սովորողն անվանում է լուսացույցի շրջանների գույները կամ ցույց է տալիս պահանջված գույնը:

Ամրապնդման համար կատարում ենք հետևյալ քայլաշարը.

- Երբ կարմիր է, կանգնում ենք տեղում:
- Երբ դեղին է, սպասում ենք:
- Երբ կանաչ է, անցնում ենք:



Խաղ

Նպատակը՝

- ✓ Նպաստել հիշողության՝ որպես իմացական գործընթացի զարգացմանը:
- ✓ Սովորեցնել երեխային հիշել այս կամ այն հրահանգը:

Անհրաժեշտ նյութեր. Կարմիր, կանաչ, կապույտ և դեղին գույներով գործվածքներից 2-ական կտորներ, դաշնամուր:

Խաղին մասնակցում է 4 երեխա: Նրանք ընտրում են գործվածքի 1-ական կտոր: Ուսուցիչը սենյակի տարբեր անկյուններում հատակին փռում է գունավոր գործվածքները: Երբ հնչում է մեղեդին, երեխաները գործվածքները դնում են իրենց գլխին և սկսում են պարել: Երբ մեղեդին դադարում է, երեխաներից յուրաքանչյուրը պետք է հիշի, թե ինչ գույնի գործվածք է դրված իր գլխին, գտնի համապատասխան գույնի գործվածքը սենյակի անկյուններում և վազի այդ ուղղությամբ [Ի. Պողոսյան, 2008]:

Եզրակացություն

Հիմնախնդրի տեսական և հետազոտական վերլուծության արդյունքները հնարավորություն են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

- ✓ Ներառական կրթությունը կարող է ապահովել, որ բավարարվեն բոլոր սովորողների կրթական կարիքները:
- ✓ ԿԱՊԿՈՒ սովորողին հանրակրթական գործընթացի մեջ գրավելու համար անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, որը և նպաստում է նրանց ակտիվության բարձրացմանը:

1. Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում մանկավարժները հաճախ կանգնում են դժվարությունների առջև: Գործնական աշխատանքները ցույց են տալիս, որ ընդհանուր մանկավարժության մեջ ընդունված մեթոդները բավարար չեն ԿԱՊԿՈՒ սովորողի հետ տարվող աշխատանքներում:
2. Անհրաժեշտ է կիրառել ուսուցման նոր, ժամանակակից մեթոդներ և միջոցներ, չհիմնվել միայն տեսական գիտելիքների վրա, այլ նպատակաուղղված աշխատանքներ տանել գործնական հմտություններ և կարողունակություններ ձեռք բերելու ուղղությամբ:
3. Արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է թիմային աշխատանք:
4. Ուսուցման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է համապատասխան կահավորում:
5. ԿԱՊԿՈՒ սովորողի գունազգացողության զարգացմանը նպաստում է համագործակցային աշխատանքը, խմբային աշխատանքը, ՛՛Ուսուցում ընկերոջ հետ՛՛ տեխնիկան:

Եվ այսպես, մանկավարժական ուսուցանող հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ գունազգացողությունը զարգացնելուն նպատակաուղղված մանկավարժական աշխատանքները և հատուկ խաղերի, խաղային վարժությունների ու հանձնարարությունների, ակտիվ մեթոդների կիրառումը տալիս են դրական արդյունքներ:

Գրականության ցանկ

1. Ազարյան Ռ. Ն., Ավագյան Ա. Վ., ՛՛Հատուկ մանկավարժություն՛՛, 2016
2. Ազարյան Ռ. Ն., Խալաթյան Վ. Գ., ՛՛Հատուկ կրթության հանրագիտարան՛՛, 2001
3. Թադևոսյան Ս., ՛՛Անհատական ուսուցման պլանի մշակման մեթոդական ուղեցույց՛՛, 2016
4. Հովսեփյան Ս. և ուրիշներ, ՛՛Թեթև մտավոր հետամնացություն ունեցող սովորողների ուսուցման մեթոդական ծրագիր – ձեռնարկ՛՛, 2010
5. Պողոսյան Ի., ՛՛Ուշադրության և իմացական գործընթացների զարգացումը երաժշտական պարապմունքների միջոցով՛՛, 2008
6. ՛՛Բժշկամանկավարժահոգեբանական գնահատման կենտրոնի տեղեկատու՛՛, 2010
7. ՛՛Եթե երեխան ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՛՛, ձեռնարկ ծնողների և մանկավարժների համար, 2004
8. ՛՛Երեխայի զարգացման մակարդակի գնահատման մեթոդիկա՛՛, 2011
9. ՛՛Ինչպես խթանել սովորողների ներառումը դասարանում՛՛, մեթոդական ուղեցույց, 2020
10. ՛՛Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը դպրոցական մակարդակում՛՛, մեթոդական ուղեցույց, 2018
11. ՛՛Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը տարածքային մակարդակում՛՛, մեթոդական ուղեցույց, 2018
12. Հանրակրթական դպրոցների ուսուցիչների եռօրյա սեմինարի նյութեր
13. ՛՛Հանրակրթության մասին՛՛ ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, ՀՀ օրենք /ՀՕ-200Ն/
14. ՛՛Ներառական կրթության ռազմավարություններ՛՛ դասագիրք
15. ՛՛Ներառական կրթություն՛՛, ուսումնամեթոդական ուղեցույց, 2015
16. ՛՛Ներառումը կրթական գործընթացում՛՛ ձեռնարկ, 2010
17. ՛՛Ներառական կրթության ժամանակակից խնդիրներն ու մարտահրավերները՛՛, միջազգային գիտագործնական գիտաժողովի հոդվածների ժողովածու

18. Պետրոսյան Ս., ՛՛Ներառական կրթությունը գործնականում՛՛, 2018
19. Олешкевич В. И., <<Образовательная интеграция и социальная адаптация лиц с органиченными возможностями>>, 2005
20. Садхана Атван, <<Идеи независимой жизни инвалидов и социальнопедагогическая поддержка ребенка с органиченными возможностями, 2004
21. <<Инклюзивное образование: непрерывность и преемственность>>, 2019
22. <<Обучение математике школьников с особенностями развития>>, праграмма и методическое пособие, 2006